



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

384.8

0120-101

ԿԻՐԱԿՆՈՒՅՆ

ԴՊԸՆՑՆԵՐ

Զեռնարկ ուսուցիչների, ուսուցչուհիների և առհասարակ ժողովադատական կովկասկան կրթութեան զործին ծառայովների համար:

Աշխատասիրութիւն Ա. Գալստեանցի:

ԲՈՒԺՈՒ
ՏՊԱՐՄՆ ՀՐԱՄԱ
1906.

374.8
4-20

374:8

9-20

~~EROS RAY~~

Four

ԿԻՐԱԿԻՆՈՐԵՎ ԴՊՐՈՑՆԵՐ

Զեռնարկ ուսուցիչների, ուսուցչուհիների և առհասարակ ժողովադաշտական կրթութեան գործին ծառայողների համար:

Աշխատասիրութիւն Ա. Գալսեանցի:

卷之三

ԲԱԳՈՒ
ՏՊԱՐԱՆ „ՏՐՈՒԴԻ“
1906.

53 601

13 MAR 2013

37058-62

ազգ դիմացք չե բնեա ուստի պայմանական ըստեա
ին զի՞ն ևապրա զի՞ն ու մասնի ու աշխատ ու ուստի?
-նիս ու զի՞ն չե պահանջարու վախճառ և բաժանեա փայտար
պահանջ չե զի՞ն թմարնու և բաշտեար և զարդար սիստ
մասնաբանի զմ պահ շահան ու նուպան ու ու բազման
ու ու զմ պահ ու նուպան ենանա չե վեցաց ու ու ու
-նեղանաբան զմ 30.ՈՒԶԱԲԱՆ չե մասնաբանը ըստ ու

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կիրակինօրեայ դպրոցների խնդիրը, շատ ժամանակներից առաջ, շարունակ զրաւել է յառաջադէմ ազգերի լուրջ ուշագրութիւնը. Այդ է խի պատճառը, որ այդ դպրոցները լուսաւոր երկիրներում աճել են տարէցտարի և աճում են ներկայումս ամենամեծ արագութեամբ ամեն տեսակի պատրաստականութեան, հասակի և սեռի անձինքների հոտմար.

Եթէ կիրակնօրեայ և երեկոյի գպրոցները կարես են
ճանաչում Եւրոպական երկիրներում, ուր պարտագիր ու-
սումն ստիպում է աշակերժին 8 կամ 9 տարի շարունակ
ուսանիլ ամենօրեայ գպրոցում, հազար դրանք անհրա-
ժեշտ են մեզ՝ հյուրիս համար, երբ գիտակցում ենք ամենիր
մեր յետամնացութիւնը ապային լուսաւորութեան գործում,
երբ հասարակ գրափիտութիւնը շատ տեղերում մեր մէջ հագ-
ւագիւտ բան է համարւում,

Ներկայ աշխատութեամբ մենք տալիս ենք հասարակութեանը ընդհանրապէս, նա մանաւանդ ազգային լուսաւորութեան գործին զեկավար մեր հայուսուցիչներին և դպրոցների հօգաբարձուներին միջոց և կարելիութիւն՝ մօտիկից ծանօթանալու կերպակնօրհայ դպրոցների ու լսարանների աստիճանական գարգացմանը, դրանց կազմակերպութիւններին, ծրադիրներին և տալիք օգուտներին, և ապա՝ ըստ պահանջի տիզի և ժամանակի, բանալու այդ տեսակ դպրոցներ մեր մէջ ևս՝ թէ բազարներում և թէ գիւղերում, թէ տղաների և թէ աղջիկների, թէ գրադէտների և թէ անդրագէտների համար:

Այդ գրքոյին մէջ ընթելցողը կ'զտնի անշուշտ հին և տարրական ճշմարտութիւններ: Բայց գիտակցելով, որ ազգային լուսաւորութիւններ է կախւած ազգի բարուրութիւններ և նրա

ամբողջ բարեկեցութիւնը, ուստի նա մեղ չի կշտամբի դրա համար: Նա անշուշտ կ'մտածէ, որ մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակ և այնպիսի պայմանների մէջ, երբ առանձնապէս հարկաւոր է զարթեցնել և պահպանել մեր մէջ յաճախ մոռացուող հին ճշմարտութիւններ: Լիայս ենք միանգամայն, որ այս զրբոյի մէջ հաղորդած տեղեկութիւնները անշուշտ կ'ներկայացնեն մի որոշ հետաքրքրութիւն մեր մանկավարժական ազրատ գրականութեան համար և կ'գարձնեն իրանց վերայ այն անձերի ուշադրութիւնը, որոնք մասնակից են ժողովադական լուսաւորութեան գործին:

Մենք չենք վստահանում ասել թէ մեր աշխատութիւնը չունի թերութիւններ, բայց կարող ենք ասել համարձակ, որ մեր ժողովրդական լուսաւորութեան գործին ծառայողները կարող են արդիւնաւէտ շահւել այդ ձեռնարկից:

Ժամանակ է խօսքից անցնել գործին: Թող մեր առաջարկած գիրքը դառնայ մի օգտաւէտ միջնորդ ժողովրդի և այն մարդկանց մէջ, որոնք անկեղծօրէն ցանկանում են ազատել ժողովրդին ապիտութեան ամուր կապանքներից: Եթէ ներկայ աշխատութիւնը, թէկուզ մի աննշան չափով, կ'հարթէ այն ճանապարհը, որի վերայ պիտի կանգնեն մեր գիւղական ու քաղաքացին կիրակնօրեայ դպրոցները — մենք այն ժամանակ մեղ բտղտաւոր կ'համարենք:

Մեր այս աշխատութիւնը կազմելիս աշրի առաջ ենք ունեցել հետեւել ազրիւրները: — Наша педагогические вопросы, соч. Барона Корфа. Наше школьное дело Бар. Корфа, Русская начальная школа Б. Корфа, соч. А. Михайлова, т. VII. Частная воскресная школа въ Харьковѣ Я. В. Абрамова, Сельскія воскресныя школы В. Вахтерова. Внѣшкольное образование народа В. Вахтерова и զանազան յօդուածներ կիրակնօրեայ դպրոցների առիթով՝ ցրւած ուսուց մանկավարժական ամսագրներում:

Աւտուածաւոր Գալուստեանց

ԿիրակնօրեաՅ ԴՊՐՈՑՆԵՐ.

Ներկայ ժամանակում, երբ մանուկների ուսուցման և կրթութեան գործը լնդուննել է բազմատեսակ ու մի և նոյն ժամանակ խիստ որոշ ձևեր, — չափահանների ուսուցման հարցը, որ ահազին նշանակութիւն ունի, գեռ ևս մնում է բոլորովին անշշակ: — Եատ չափահաններ գեռ մինչեւ այժմ էլ մնում են անզրագէտ:

Անզրագէտներ շաբունակում են տալ մեղ և նոր սերունդները, որովհետեւ շատ և շատ մանուկներ՝ բազմապիսի պատճառներով՝ մնում են առանց տարրական ուսման: Բայց մի և նոյն ժամանակ ձգտումն զէպի ուսում ու մտաւոր զարգացում արագապէս աճում է չափահանների մէջ: Կամենում են սովորել անզրագէտները, կամենում են լնդլալնել իրանց գիտցածները ամենօրեայ դպրոցը աւարտած կամ չ'աւարտած պատանիները: Այժմ զէպի լոյտ ձգտելու այդ մեծ բաւականութիւնը հասակաւորները գտնում են 'ի միջի այլոց կիրակնօրեայ դպրոցներում, մի այնպիսի հիմնարկութեան մէջ, ուր ուսումն լինում է կիրակի կամ տօն օրերին:

Կիրակնօրիայ դպրոցների ու լուսանների ծագման հարցը նոր չէ: Այդ տեսակ դպրոցների բարձր ու կրթիչ նշանակութիւնը շատ վազուց է, մօտ 120 տարի, սրանից առաջ հասկացել եւրոպան: Եւ այդ է պատճառը, որ ներկայումս դրանց թիւը, տարրական դպրոցների հետ զուգընթացար, օրէցօր աճում է ու բազմանում: Այդ տեսակ դպրոցները, որ զիսաւորապէս տարածւած են Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմա-

Նիայում, Շվեյցարիայում և Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգներում, իրանց ծագումով պարտական են անզլիացի բապտիստ Ռոբերտ Ռայքիսն. դա առաջինն եղաւ, որ պարլամենտում կիրակնօրեայ գլորոցների մասին խնդիր յարուցեց և սկսեց կիրակի օրերին եկեղեցում տպաներ ժողովել և նրանց հետ պարապել: Նրա օրինակը ահօգուտ չանցաւ. 1785 թ. հիմնում է մի ընկերութիւն, որի նպատակն է լինում տարսել ամենուրեք կիրակնօրեայ գլորոցներ: Այդ ընկերութիւնը օժանդակում էին ինչպէս տիրապետող եկեղեցին, նոյն պէս և զանազան այլապաւան խծական եկեղեցիները:

Ամերինագլխաւոր առարկան այդ տեսակ գլորոցներում համարում էր կրօնը, յետոյ կարդալը և երբեմն էլ գրեշը: Ասացի երբեմն էլ գրեշը, որովհետեւ նրա գործադրութիւնը կիրակի օրերին մեղք էր համարում: Կիրակնօրեայ գլորոցները հիմնում էին եկեղեցիներում, մատուններում և մասնաւոր աներում: Դասաւութիւնը սկսում էր առհասարակ $9-10\frac{1}{2}$ ժամին առաւոտեան և $2-4$ ժ. կլոսրից յետ: Աշակերտները սովորում էին ձրի, միայն երբեմն պարտաւորեցնում էին նրանց մասնակցել եկեղեցական ժամերգութեանը: Ուսուցիչները և ուսուցչուհիները ձրի էին զասաւանդում և միայն մօտ 4% նրանցից վարձ էր ստանում: Այդ գլորոցներում ուսուցութեամբ պարապում էին զյուսորապէս ծխականներ, բանորներ, երբեմն էլ հասարակութեան բարձր դասակարգից:

Կիրակնօրեայ գլորոցները Սնագլիայում այնքան յաջող վիճակի մէջ էին և այնքան շատ, որ նրանց օգտին հրատարակում էին 8 հատ ամենօրեայ թերթ և տարածում 100 հազար օրինակներով, հրատարակում էր նոյնպէս և մի ամսագիր և 8 հատ էլ տարեկան ժողովածու: Բացի դա, տպագրում էին բազմաթիւ ձեռնարկներ, դասագրեր և դասաւանդաման պիտոյներ:

Կիրակնօրեայ գլորոցների ուսացիչ—ու ուսուցչուհիների համար ևս հիմնում էին երեկոյի գլորոցներ, դասընթացներ, լսարաններ, որտեղ փորձառու ուսուցիչներ բացատրում

էին անփորձներին դառաւանդման եղանակեր և միթօղներ:

Կիրակնօրեայ գլորոցներից մի քանիոը յաճախում էին միմիայն մանուկներ, մի բանիոը՝ շափահաս տղաներ: Երբեմն էլ աշակերտների հետ միասին կ'նստէին մի և նոյն դասաւանը 60—80 տարեկան պառաւ կանայք ու տղամարդիկ: Մի բանի շրջաններում այդ գլորոցները յաճախում էին 38% , մինչև անզամ 52% ընդհանուր բնակչութեան:

Այդ գլորոցները, որ գտնում էին հոգերականութեան ձեռին, մի լաւ միջոց էին համարում մի յայտնի գաղափար տարածելու և այդ շատ լաւ հասկանում էին այլապաւանները— գիսսիդենտները: Դրանք լուսաւորութեան գործին չէին ծառայում, այլ զյուսաւորապէս տալիս էին ժողովրդի մտքերին մի յայտնի ուղղութիւն՝ կարգալով ու բացատրելով ու զբից յայտնի տեղեր:

Կիրակնօրեայ գլորոցները, որ սկզբում հիմնել էին կաթոլիկ կղերի ձեռքալի, սկսում են հետզհետէ, թէֆօրմացիայի չնորհիւ, տարածւել և բոլորականների մէջ: Բայց աւելի լայն ծաւալ ու զարգացումն ստանում են Շոլլնդիայում 18-րդ դարի վերջն, չնորհիւ գրաշար Թանկէի հռանդին: Այդ մարդը յաճախելով բանտերը, զժրապտներին օգնելու նպատակով, տեսնում է որ յանցաւորների մեծագոյն մասը անզրագէտ է և երբէք գլորոցում չէ եղած՝ ժամանակի սուզութեան պատճառով: Եւ ահա աշխատում է նա, որ զործով կամ մուրացկանութիւնով պարապով երեխանները կարելիութիւն ստանան սովորելու կիրակի և տօն օրերին: Անցնում է 5 տարի և Անգլիայում հաշում էր արդէն 300 հազար ուսանող կիրակնօրեայ գլորոցներում: Ոչ պակաս յայտնի զարձաւ կօշկակար Պուլսոնը, հիսներլով Անգլիայում առաջին անզամ գլորոցներ մուրացկանների համար:

Ներկայումս Անգլիայի կիրակնօրեայ գլորոցներում ուսանում են աւելի քան 2 միլիոն հոգի: Պրուսիայում զանազան կարգի կիրակնօրեայ և երեկոյի արգինազործական, հանրա-

կրթական, նկարչական գովրոցների ու դասընթացների ընդհանուր թիւը հաշտում են մինչև 25 հազար, իսկ աշակերտների թիւը այդ գովրոցներում մօտ $1\frac{1}{2}$ միլիոն։ Դանիայում հաշտում են 400 կիրակնօրեայ գովրոց և 50 հազար աշակերտ։ Ֆինլանդիայում 5000-ից աւել և 110 հազար աշակերտ։ Շվեդիայում մօտ 6000 գովրոց և $\frac{1}{4}$ միլիոն աշակերտ։ Նորվեգիայում աւելի քան 200 գովրոց և 30 հազար աշակերտ։ Հիւս. Ամերիկայի միացեալ հաճանգներում հաշտում են 100 հազար կիրակնօրեայ գովրոց, ուր կան 8 միլիոն աշակերտ և 900 հազար մօնիստոր, այսինքն գովրոցի կառավարչի օգնականներ։ Սյս մօնիստորները երկու սեռի երիտասարդներ են, որոնք անցել են կիրակնօրեայ գովրոցի կուրսը՝ զեկավարում են աշակերտական փոքրիկ խմբերին, կրկնելով նրաց հետ գասերը։

Կիրակնօրեայ գովրոցների այդ փոխագարձ ուսուցման սիստեման, որ կոչում է՝ 'ի պատիւ նրա հեղինակների' ԲԷլ—Լանկաստերի monitor system, սկիզբն առաւ Անգլիայում և ապա ամենարէք տարածելով մտաւ Ուուսաստան 1820—1825 թ.։ Չորրիւ բիրլական ընկերութեան գործունէութեան, որ վայելում էր Ազէքսանդր I կայսեր առանձին հովանաւորութիւնը։ Բայց այդ գովրոցները արգաւանդ հոգ գտան միմիայն Բարդիան հաճանգներում, ուր և նրանց թիւը հասաւ մօտ 485-ի։

Իսկ երկրագնտիս վրայ՝ Կոպինհագէնի համաշխարհային կիրակնօրեայ գովրոցների ներկայացուցիչների համագումարի քարտուղարի հաշտութվը, կիրակնօրեայ գովրոցների ընդհանուր թիւը հասնում է մէկ միլիոնի, որտեղ ուսանում են 20 միլիոնի շափ աշակերտ—աշակերտուհի և ուսուցանում 2 միլիոն ուսուցիչ—ուսուցչուհի։

Սյդ գովրոցները պահպանում են այլ և այլ միջոցներով։ Օրբնակ Գերմանիայում, Ֆրանսիայում, Ֆինլանդիայում այդ գովրոցների բիւշէի կէսը ծածկում են համայնքները, իսկ միւս կէսը—մասնաւոր ընկերութիւնները։ Բէլգիայում դրանց

ծախոսի կէսը հոգամ է կառավարութիւնը (300 հազար փրանկ), իսկ միւս կէսը—գաւառները ու համայնքները։ Մի քանի երկրներում աւել կամ պակաս նշանաւոր ծախսերը ընդունում են իրանց վերայ աշակերտները։ Օրինակ Անգլիայում. այնտեղ ուսումնավարձ վերցնում են բոլոր այդ տեսակ հաստատութիւններում։ Ուսումնավարձ վերցնում են և Ուուսաց տեխնիքական ընկերութեան կիրակնօրեայ գովրոցներում։

Վերոյիշեալ բոլոր կիրակնօրեայ գովրոցները տարբերում են սովորականներից նրանց մէջ ուսանող աշակերտների կազմով։ Սյդ այն գովրոցներն են, որտեղ ուսումն սկսում է պարտագիր աշխատնքից յետոյ ազատ ժամերին, որտեղ աշակերտների գիսաւոր թիւը կազմում են աշխատաւոր մասնա—բանուրները, արհեստաւորները, երկրագործները, աղախինները, ծառաները, աւետրավակն հիմնարկութիւններում և գրասենեակներում ծառայողները։ մի խօսքով գա գովրոց է աշխատաւորների համար ամենալայն մտքով։ Կիրակնօրեայ գովրոցները այդ նշանակութիւնն ունին և Ուուսաստանում, միայն այն զանազանութեամբ, որ Ուուսաստանում տարրական գովրոցների քչութեան պատճառով, յաճախ ընդնեռում են կիրակնօրեայ գովրոց բանուրների հետ միասին և երեխաներ, որոնք շունին պարտագիր աշխատանք։ Բայց այդ մի և նոյն երեսոյթը տեղի է ունեցել և եւրոպայում 100 գարի սրանից առաջ։

Մինչդեռ Ուուսաստանում կիրակնօրեայ գովրոցները չեն անցնում տարրական գովրոցների ծրագրի սահմաններից, Եւրոպայում այդ գովրոցը մտել է արդէն ամենաբարձր զարգացման ֆաղիսը, որտեղ ծրագիրները ընդունել են մասնագիտական բնաւորութիւն և ստեղծել գովրոցներ բազմապիսի տիպերով, իրարից տարրեր թէ նպատակներով և թէ ծրագիրներում։ Կան գովրոցներ, յիրաւի, որտեղ անցնում են տարրական գովրոցի կուրսը միայն, ինչպէս Ուուսաստանում։ Կան գովրոցի կուրսը միայն, ինչպէս Ուուսաստանում։ Կան գովրոցներ, որտեղ շարունակում են տարրական գովրոց աւար-

տածները, կան և այնպիսիները, որոնք կրում են պրոֆեսիօնալ բնաւորութիւն։ Պատահում են կիրակնօրեայ դպրոցներ և յիտամնաց աշակերտների համար։ Գերմանիայում ստորին տիպի կիրակնօրեայ դպրոցների շարքում կան և տարածւած են աւելի լայն ծրագրով նոյնանման դպրոցներ։ Դրանցից մի քանի սի մէջ աւանդում են մեքենայագիտութիւն, երկրաշափութիւն, ֆիզիքա, քիմիա, միւսներում քաղաքատնտեսութիւն, պատմութիւն, դրականութիւն, Գերմանիերէն լիզու և այլն։ Էլեկտրական միջի այլոց տարածւած են երեկոյի կիրակնօրնայ դպրոցները, որը աւանդում են հաշւապահութիւն, նկարչութիւն, երկրաշափութիւն և զանազան արհեստներ։ Վիւրտինբերգում հիմնած կան գիւղատնտեսական կիրակնօրեայ դպրոցներ։ Փարիզում շատ կան կիրակնօրեայ երեկոյի դպրոցին, միջնակարգ դպրոցների ծրագրով, որտեղ երիդասարդ բանտորները աշխատանքի ազատ ժամերին ձրիապէս կարող են պատրաստել համալսարան մտնելու համար։ Կիրակնօրեայ դպրոցները Շվեյցարիայում շատ լաւ վիճակի մէջ են, բայց դրանք բացւած են գլխաւորապէս արհեստաւորների և գործարանների մէջ գործող երիդասարտների համար, և այդ ոչ թէ միայն նրա համար, որ լրացնեն երանց ուսումն, այլ որքան նրա համար, որ կատարելագործեն այն գիտելիքները, որ ձեռք են բերել տարրական դպրոցներում։ Ֆրէյրուրգի կանոնում այդ դպրոցները սաստիկ տարածւած են, մանաւանդ գիւղերում։ Առարկաներն են—գրել, կարդալ, թուարանութիւնն, նկարչութիւնն, գերմաներէն և ֆրանսերէն լեզուներ։

Բայց կիրակնօրեայ դպրոցների թագն ու պատկը համարում են համալսարանական կուրսերը, գիւղական և ժողովրդական համալսարանները, որոնք լայն շափերով տարածւած են Անգլիայում։ Եւ, յիրաւի, այդ երկրում, որտեղ մինչև վերջն ժամանակներս մուտքը համալսարան այնպէս դժւարացրած էր, որ տաղանդաւոր, մինչև անդամ գիտութեան, փելիսովայութեան և գրականութեան հանճարաւոր ներկայացուցիչները եղել են

սովորական մարդիկ, որ չեն ստացել համալսարանական կրթութիւն, այդ մի և նոյն երկրում համալսարանական գիտութիւնը տարածւած է հասարակ բանւորների մէջ։ Բարձրագյն կրթութիւնը, որ մինչև հիմայ յարմար էր ճանաչւում միայն մի որոշ հասարակի համար, այժմ դառնում է ամբողջ կեանը գործ։ Այն տեղեկութիւնները, որ ձեռք է բերել կրթւած դասը պրօֆեսսիոնալ նպատակներով, ստանում են հանրակրթական բնաւորութիւն։ Գիտութիւնները, որ չույղութիւն էին համարւում ոչ պրօֆեսսիոնալ ուսումնարանների համար, այժմ ճանաչւում է խիստ կարևոր։ Յառաջ է զայխ, կամ ճիշտ է ասել, սկսւում է մի համաշխարհալին պոսցես, որի մասին հաղիւ թէ երբ և իցէ երազած լինէին մեր նախնիները։

Սոյլ շարժման էութիւնը նրա մէջ է կայանում, որ գիտութեան մարդիկ իրենք են մօտենում լոյս ու գիտութիւն որոնողներին, որովհետեւ այս վերջիններս, զբարւած լինելով ամեն օր մի կտոր հաց ճարելով, ժամանակ չեն զբանում համալսարան յաճախելու։ Մի քանի տեղերում համալսարանները իրանց գասախօսների միջոցով երկրի զանազան անկիւններում գտնելով բանւորներին, գործակատարներին և կանանց հաղորդում են գիտութեան վերջին խօսքը։ Օքսֆորթի և Կիմբրիջի աւագ սուսանողները մրցում են երար հետ համալսարանական գիտութիւնները բանւոր դասի մէջ տարածելու գործում։ Դասախոսութիւններ կարգում են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են՝ Գլքսլի, Թայլօր և այլն։ Ունկնդերների թիւը զիս 1891 թ. Անգլիայում հաշւում էր 45 հազար. իսկ 1892/3 թ. միմիայն Օքսֆորթում 23 հազար, Ֆիլադելֆիայում 19 հազար, Չիկագոյում 25 հազար, Նիւ-Թօրկում 14 հազար և այլն։

Սոյլ շարժումն կատարւում է այնպիսի արագութեամբ, որ եթէ գործը մի քանի տասնեակ տարի էլ այդպէս շարունակվի, էլ հեռու չէ այն ժամանակը, երբ Անգլիայի և Միացեալ-նահանգների բանւորութեան մեծագոյն մասը մասնակից ար-

ւած կ'լինի գիտութեան աղբիւրներին։ Ունկնդերների մէջ նկատելի է այնպիսի մեծ եռանդ, որ քննութիւնների ժամանակ ցոյց են տալիս գիտութեան մէջ ոչ պակաս հմտութիւն, ըան իսկական ուսանողները, չ'նայելով որ մեծամասնութիւնը պարագում է գիտութիւնով ամենօրեայ ծանր և սկ աշխատանքից յետոյ, որ կատարում է նա հանգերում և զործարաններում։ Դասախոսութիւնները կազմում են այնքան հետաքրքիր ու պարզ ժաղովրդական, որ կարող է հետութիւնով լսել նրանց լուրջ պարագմունքներին քիչ պատրաստած ունկնդիրն անգամ։ Մի և նոյն ժամանակ ունկնդիրներին բաժնում են տպագրած դասախոսութիւնների համառօտ բովանդակութիւնը։ Աւելի լուրջ պարագողներին յանձնարարում է կարգալ այս կամ այն գիրքը, կամ գրքի այս կամ այն երեսը։ Բացի գրանից ունկնդիները գրաւոր բանակցութեան մէջ են մտնում դասախոսների հետ, ներկայացնում են շարագրութիւններ տւած նիւթի վերաբերեալ և վերստուգում նրանց ձեռք բերած գիտութիւնները։

Այդինի աշխատանքի լուրջ մասը փոխադրում է կոնսպեկտի ու բանակցութիւնների միջոցով՝ տնային աշխատանքի։ իսկ դասախոսութիւններն, որ լինում են հետաքրքիր ունկնդիրների համար, դառնում են նաև մի գրաւիչ բան մեծ հասարակութեան համար, մի միջոց՝ զարթեցնելու և նրա մէջ հետաքրքրութիւն դէպի գիտութիւն, փոքր առ փոքր էլ նրան պատրաստելու լուրջ պարագմունքի։ Ամեն մի դասախոսութիւններից յետոյ տեղի են ունենում բացարութիւններ, զրուցատրութիւններ, որոնք անցնում են այնքան աշխոյժ, որ յաճախ ստանում են դաք վիճաբանութիւնների բնաւորութիւն։

Ուրիշ տեղերում գիտութեան տէր մարդիկ՝ պրօֆեսորներ, մասնագէտներ—կազմում են տնային բնթերցանութեան համար ծրագրներ համալսարանական կուրսի այլ և այլ առարկաներից։ յանձնարարում են գրքեր, հրատարակում և ուղար-

կում իրանց թղթակիցներին յայտնի վճարով, տալիս են գրաւոր բացարութիւններ, ցուցմունքներ և, առհասարակ, զեկավարում են տնային ընթերցանութիւնը նրանց, որսնը գիմուռ են այդ տեսակ հիմնարկութիւնների օգնութեանը։ Եթէ թղթակիցները ցանկանում են, ուզարկում է նրանց, կաւըը աւարտելուց յետոյ, ընհական թեմաններ շարագրութիւնների համար և թերթեր՝ հարցերով, որոնց քննուղը պիտի պատասխանէ։

Ամերիկական այդ հետաքրքիր հիմնարկութիւնը կազմւելէ կիրակնօրեայ գպրոցների դասատունների ամարւայ համագումարից, որին շուտով հետեւեց Եւրոպան և մինչև անգամ Ռուսաստանը, որտեղ յաջողութեամբ գործում է այդ նոյն սիստեմայով տնային կրթութեան կօմիսեան, որ բացւած է տեխնիկական գիտութիւնների տարածման ընկերութեան կից, ուսումնարանական բաժնամ։

Հանրակրթական հիմնարկութիւնների մէջ ոչ պակաս նշանառ են այդպէս կոչւած գիւղական համալսարանները Դանեայում, Շվեյցեայում և Նորվեգեայում։ Այդ համալսարանների ծրագրները վերին աստիճանի բազմատեսակ են. օր. Ասկօնում, բացի սովորական դասախոսութիւններից՝ աշխարհագրութիւններից (հայրենի և ընդհանուր), պտամութիւնից (ազգ. և ընդհ.), գրականութիւնից (ազգ. և բնդհ.), բերականութիւնից, բարձրագոյն թուարանութիւններից, անդպիտական, հին-նորմանատական լեզուներից և հին նորմանդական ասացւածքներից և առասպելներից տալիս են նաև տեղեկութիւններ ծովի, օդի, և ֆիզիքայի մատին, նայն պէս մագնիսականութեան էլեքտրականութեան, ընդհանուր երկրաշափութեան, գործարանական և ոչ գործարանական քիմիայի մատիմատիկայի հաշւապահութեան, մուրհակների ուսման հասարակական իրաւունքների և ժողորդական տնտեսագրութեան մասին տեղեկութիւններ։

Այն արհեստաւորները, որոնք կամենում են կագարելաց գործւել իրանց արհեստի մէջ, մտնում են այդ տեսակ համալ-

սարան, որ բացւած է Դանեայում կաղմարաք Կուդի աշխատութիւնով և որտեղ նրանք ի միջի այլոց սովորում են տեխնիքական նկարչութիւն և շինարարական արհեստ։ Բայց դրանից արհեստաւորները սովորում են կանոնաւոր գրել, նամակներ յօրինել, հասարակ և կրկնակի հաշւապահութիւն, Դանեայի պետական կազմը և օրէնսդրութիւնը, իսկ սիրողները ազատ ժամերին ժողովում են ժողովրդական աւանդութիւններ և տեղական բարբառներ։

Կայ համալսարան և Աէդկիլիէ քաղաքում, որտեղ գիւղացին՝ հետաքրքրւած ժամանակակից սօցիալական հարցերով կ'գտնի այն, ինչ որ իրան հարկաւոր է։ Կրոնական հարցերով գրադւած մարդիկ կ'գտնին իրանց պատասխանները Խելունդէ քաղաքում։

Գիւղական ակադիմեայի գաղափարը Դանեայից անցնում է Փինլեանդեա։ Ֆինլեանդական բարձր կուրսերը իրանց ծրագրով բռնում են մեջն տեղը դանեական կուլսերի, որոնք ունին նշ-գործնական բնաւորութիւն և շվեդականի, որ ունի գլխաւորապէս գործնական նպատակներ։ Յիշեալ կուրսերի ծրագիրն այս է-եկեղիցական պատմութիւն, կրօն, թելագրութիւն, շարագրութիւն, գեղարւեստական ընթերցանութիւն, Փիննական գրականութեան պատմութիւն, բանաստեղծութիւն, ոտնաւորների մեկնութիւն, ընթերցումն ֆիննական գրականական երկերի, ընդհանուր պատմութիւն, թւաբանութիւն, բուսաբանութիւն, քիմիա-ընդհանուր, տշխարհագրութիւն, երգ, ձեռագործ, մարմնամարզութիւն, հաշւապահութիւն, բնակարանների և առհասարակ տների շինութեան առողջապահութիւն։

Գծագրութեան նպատակնէ ուսուցանել երկրաշափութիւն պարզ եղանակով։ Հաշւապահութիւնը անցնում է իսկ հասարակ, որ կարենը է ամեն մի գիւղացուն իր տնտեղութեան մէջ։

Օրիորդները սովորում են կարել և գործել։ Կուրսը շարունակում է 6 ամիս-հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի 1 ը։

Պարզ է ինքն ըստ ինքեան, որ այդպիսի մի կարճ միջոցում չի կարելի հաղորդել ունկնդիրներին շատ գիտելիքներ։ Սակայն բարձր կուրսերը այդ մասին շատ էլ չեն մտածում զլիստար նպատակ գներով մարդուս ընդհանուր գարդացումն, որին հասնում են զրոյցների, վիճաբանութիւնների և ընթերցումների միջոցով։ Ուստի հիմնական կանոնի կատարեալ ազատութիւնները այստէլ է. ուզում ես լիր դասախոսութիւնները, չես ուզում մի՛ լիր։ Մանելու համար քննութիւն չի պահանջուում։ 18 տարեկանից էլ պակաս չեն ընդունում, որովհետեւ դա այն հասակն է, երբ որոշում է մարդուս աշխարհայեացը, երբ մարդու որոշում է իւր ապագայ գործնէութեան եղանակը։ Ոչ մի, ի հարկէ, աւարտման քննութիւն չ'կայ. տանը գրում են շարագրութիւններ, նոյնպէս և յօդուածներ ձեռագիր լրագրի համար, որ հրատարակում են իրանք ունկնդիրները։ Բոլոր գիտելիքները հաղորդում են զրոյցների և դասախոսութիւնների ձեռվ։ Կուրսերի նպատակն է երիտասարդներին գիւղից չ'եռացնել, զվանք դէպի նա շներշնչել, այլ ընդհակառակն-ստիպել նրանց սիրել գիւղական կեանքը, որի մէջ նրանք պարտաւոր են մտցնել բարքերի մելմութիւն, յարգանք դէպի գիտութիւն և արհեստ։

Գերմանեայում մի և նոյն նպատակներին ծառայում է ժողովրդական լուսաւորութիւն տարածող ընկերութիւնը, որ կազմում է զրոյցներ աստղաբաշխութիւնից, պատմութիւնից և ազգային գրականութիւնից։ Ունկնդիրների թիւը այնքան մեծ է, որ չորս զրոյցներին մի շաբաթւայ մէջ Դիւսսելդորֆում ներկայ են եղել աւելի քան 7,000 հոգի։

Ժողովրդական համալսարան կայ և Բէլգեայում։

Եւրոպայի այդ շարժումն յօգուտ ժողովրդական մասսաների լուսաւորութեան, կերակնորեայ գլորցների և լուսա-

ների միջոցով, արձագանք գտաւ և լայնածառալ Ռուսաստանում 50—ական թուականների վերջում¹⁾։

Գուղէ շատերի յիշը դութեան մէջ լինի և ամենը ինը ըստ աւանդութեան յայտնի լինի այն ժամանակները, երբ 60-ական թուականների սկզբին զարժնեց գիտակցական կեանք ուսւ հասարակութեան մէջ և մի և նոյն ժամանակնախ կիեռում և ապա մայրաքաղաքներում և մի քանի ուրիշ վայրերում ուսւ ինտելիգենցեան յիշեց իւր սրբազն պարագը գէպի անդրագետ ժողովրդական մասսաները, երբ նա գլխովին նէր եց լուսաւորութեան տարածման գործին և սկսեց եռանդով ուսուցանել կիրակնօրեայ դպրոցներում, որոնք ամենից ընդունած և մի և նոյն ժամանակ ամենամաշելի ձեն էր համարւում այդ տեսակ գործունէութեան։ Հէնց առաջին խեկ օրերում կիրակնօրեայ դպրոցներում նկատում էր երկու հոսանք, մի կողմից կրթւած մարդիկ անշահաւնդիր և երիդասարդական եռանդով առաջարկում են իրանց աշխատանքը, ժամանակը և գիտութիւնը հասարակ ժողովրդին, իրանց եղրորը, ընկերին, միւս կողմից էլ մարդիկ, լի չաւատով գէպի իրանց ուսուցիչները և ծարաւի գիտութեան կինդանարար լոյսը խումբ-խումբ ժողովում էին դպրոցական շինութիւնները՝ շաբաթւայ մէջ նրանց միակ ազատ օրը՝ զբագիտութիւն ձեռք բերելու և միաբ զարգացնելու։ Եւ այդ երկու հոսանքը միմեանց հանգիպելով, գործը դառնում էր թէ իթի և աշխոյժ, ստեղծւում էր մի տեսակ պարզ, բարեկամական և անկեղծ յարաբերութիւն մարդկանց մէջ, որոնք կեանքը պայմաններում կանոնած էին մէկ մէկուց շատ և շատ հիպու։ Սշակերտների և ուսուցիչների այդ մօտ յարաբերութիւնները, որ համարւում էին կիրակնօրեայ դպրոցների ամենագուստուր կողմին,

¹⁾ Առաջին կիրակնօրեայ դպրոցը հիմնել է յայտնի Պիրոցը 1859 թ. հոկտ. 11-ին, երբ նա այն ժամանակ կիեւի Ռւս. շրջանի հոգաբարձու էր։

ստեղծում էին մի այնպիսի մթնոլորդ, որի մէջ չնշելլ հեշտ էր լինում և զարծն էլ յաջող ընթանում։ Մէկը կամնում էր, որքան կարելի է, աւելի տալ և ամենալաւը, ինչո ր զիտէր, միւսն էլ-որքան կարելի է ճշութեամբ և լրիւ իւրացնէ աւանդածները։

Դասատուների շարքերի մէջ կարելի էր տեսնել գործողներ ամեն գասակարգից-հոգեորական, ազնւական, խառն, և տղամարդ, ե՛ կին, ե՛ ծեր, ե՛ երիտասարդ, մանկավարժ, պրօֆեսօր, ուսանողներ և անձինք, որոնք ստացել էին տնային կրթութիւն։ Միջոց ունեցողները տալիս էին դպրոցներին դրամական նպաստներ, գերասանները համերգներ էին տալիս յօգուտ դպրոցների, բաղարները իրար դէմ պայքար էին մտնում դպրոցների թւի վերաբերմամբ։ Դպրոցները լեցում էին աշակերտներով։

Կիրակնօրեայ դպրոցների կազմակերպութիւնը այն ժամանակ շատ հասարակ էր։ Ուսուցիչները ձրի, աշակերտների այցելութիւնը ոչ պարագիր. ձրի գրքեր ու ձեռնարկներ։ Ուսուցիչներից ամեն մէկը վերցնում էր կամ մի խումբ աշակերտ, կամ մէկ առարկայ և պարապում մէկ կամ մի քանի խմբի հետ։ Սշակերտները իրանք էին նշանակում թէ ինչ են կամնում ուսանիլ և ուսուցիչներն էլ կատարում էին նրանց ցանկութիւնը։ Պարապմունքները լինում էին թէ առաւտները և թէ կէսորից յետո։

Աւանդելի առարկաներն էին կրօն, ընթերցանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, բնագիտութիւն, գրութիւն թւարանութիւն, նկարչութիւն, գիտողական ուսումն, տեղ տեղ էլ արհեստներ և գործնական երկրաչափութիւն, ֆրնտերէն ու զերմաներէն լեզուներ։ Սլդ դպրոցներում թոյլ էր տրած պարապելու ամենքին։ Դպրոցը միանդամայն պատճիմնարկութիւն էր հասարակութեան համար և հսկողութիւնը թողնուած էր ամեն մի այցելուի, որին առաջարկուում էր նշանակել իր նկատողութիւնները մատեանի մէջ։ Վատ և անընդունակ ուսուցիչը հեռացնուում էր բոլոր գասատուների

ընդհանուր քուէտրկութեամբ։ Պետական բոլոր հաստատութիւնները, վարչական անձինք և քաղաքային վարչութիւնները համակրում էին և նպաստում այդ տեսակ դպրոցների բազմաւալուն։ բայց տեղ-տեղ էլ մասնաւոր անձինք՝ վաճառական գասից, նոյն խակ քաղաքային վարչութիւններ մերժում էին նպաստներ տալոց։ Զ՞նայելով սակայն այդ խոչվոտներին, կիրակնօրեայ դպրոցների թիւը 1—2 տորուոյ ընթացքում հառաւ 90-ի։ Տարաբաղտաբար հենց առաջին անգամներում Պետերբուրգի մէկ-երկու կիրակնօրեայ դպրոցներում դաստունների մէջ գտնւեցան մարդիկ, որոնք թոյլ տւին իրանց բոնանալ մանկան բնութեան և տղէտ ամբոխի վերայ, այսինքն դպրոցի մէջ ոկտեցին քաղաքական պրօպօգանգա՝ բարձելով ունկնդիրների շինքին ուսուցչի գաւանանքը, որ անկարող էին նրանք ոչ մարսիլ և ոչ էլ ստուգել։

Այդ անհատական փորձերի առելթով սակայն ոչ քննութիւն եղաւ և ոչ էլ մեղաւորները դատի կանչւեցան, այլ խոյն և եթ-10 յունիսի 1862 թ. բոլոր կիրակնօրեայ դպրոցները, բացի Խարկովի օրիորդաց մասնաւոր կիրակնօրեայ դպրոցից, փակւեցան ց'նոր տնօրինութիւն, որով և հասարակութեան եռանդին տրւեցաւ այնպիսի հարւած, որից նա ուշքի չ'եկաւ շատ երկար ժամանակ։ Փոխանակ նպատակայար մար և նախազդոյց միջոցներ ձեռք առնելու շարիքի դէմ, դասաւութեան վերայ խիստ հսկողութիւննշանակելու, ծրագրների և ուղղութեան վերաբերմամբ որոշ պահոնչներ անելու, կառավարութիւնը վակել տւաւ դպրոցները։ Փոխանակ շարիքի դէմ կռւելու և վերջ տալու նրան, նա կամեցաւ ոչնչացնել այն գործուր գործոնները, որոնք նպաստում են մարդու բարոյական և մտաւոր կատարելագործութեանը։

Դպրոցների փակումից յետոյ մշակեց 1864 թ. դպրոցական նոր կանոնադրութիւնը, որով կիրակնորոյաց դպրոցները մտան նոր օրէնքի տակ և նրանց բացման պայմանները աւելի հեշտացան, քան թէ առաջ։ Զ՞նայելով դրան, այնուամենայնիւ

փակւած դպրոցները երկար ժամանակ փակւած մնացին, խակ դրանց փոխարէն՝ բացւեցան 1866 թիւն հոգեսր ումբնարեաններին կից 33-ից աւելի կիրակնօրեայ դպրոցներ։ Ի՞նչ էր պրապատճառը. բնշու. չվերաբացւեցան խոյն այն դպրոցները. 1864 թ. նոր կանոններով. ուր զնացին այն լուրջ դաստունները, որոնք առաջւայ դպրոցների սպին էին. թէ զուցէ դա մի ովհութիւն էր աղնիւ և եռուն, բայց շուտով մարւող. գուցէ երկիւլն էր նախոկին անյաջողութեան կամ նոր պայմաններին յարմարւելու անկարելիութիւնը, և այն Սյդ հարցերն որպան հետաքրքիր են մասսաների հոգիբանական տեսակետից ներկայումս դժուար լուծանելին։

Մենք տեսանք վերեռում, որ կառավարութեան կարգադրութեամբ 62 թիւն փակւեցան Թուաստանի կիրակնօրեայ բոլոր դպրոցները, բացառութեամբ միմիայն Խարկովի օրիորդաց կիրակնօրեայ դպրոցի, որ մասնաւոր կերպով շարունակում էր իր գոյութիւնը և որը յետոյ, երբ 70 թիւն նրա գոյութիւնը ճանաչւեցաւ պաշտօնապէս, յայտնի դպրաւ ամենուրէ չնորհիւ նրա ղեկավար տ. Խ. Ալեսկու եռանդին ու հմտութեանը։ Սյդ ժամանակից նա երկար տարիներ մնում էր մէն մինակ և միակ ներկայացուցիչը այդ տեսակի ժողովրդական—կրթական հաստատութիւնների։ Փորձեր չէին լինում նոյնանման դպրոցներ բանալու և ուրիշ տեղերում։ Դրա պատճառները շատ էին, ի հարկէ, և ի թիւս նրանց, ամենազդիլ պատճառը պիտի համարել այն, որ հասարակութեանը անյայտ էր այդ դպրոցի գոյութիւնը և նրա մասին տեղեկութիւն չկար։ Դպրոցների մասին տեղեկութիւններ տպագրում էին բացառապէս մանկավարժական հրատարակութիւնների մէջ, որոնք առ հասարակ շատ չէին աարածւած հասարակութեան մէջ և առանձին ուշագրութիւն նրանք չէին դրաւում։

Կիրակնօրեայ դպրոցների գործի մէջ կենդանութիւն սկսում է վերջին երկու տասնամետակում, երբ մամուլի մէջ

սկսում են երեալ տեղեկութիւններ Խարկութիւնի կիրակնօրեայ դպրոցի մասին և հրատարակում է „Կո շատ առօդ” գիրքը, որ կազմել էին Խարկովի կիրակնօրեայ դպրոցի վարժուհիները։ Նրա երկու մեծածաւալ հատուքների մէջ քննած էին 2 ½ հազար գիրք ժողովրդական ընթեցը անութեան համար։ Այդ գրքերի քննադատութիւնները հանդաւմնութիւն կազմւած էին ունկնդիրների կարծիքների հիման վերաբերյալ, շատ անդամ էլ բառացի բերւած։ Գրքերի ըննադատութեամին այդ եղանակը համարւում էր բոլորովին նորութիւն-ուժը մի տեղ մինչև այն չգործադրած։

Խարկովի կիրակնօրեայ դպրոցը մի կենացքն էր, որ դալիս էին հեռաւոր տեղերից ուսումնամիջելու կիրակնօրեայ դպրոցների գործը այնպիսի յայտնի մանկավայրեմներ, որպիսիք են Բարօն Կօրփ, Եւտուշևսկի, Մերօպլուսկի, Ս Ամենօվի և այլն։ 1880 թւականից սկսած՝ Սլշեսկու օրինակին հետեւ սկսեցին բանալ կիրակնօրեայ դպրոցներ շատ տեղերում-նշ միայն մայրաքաղաքներում, նահանգական գաւառական մեծ ու փոքր քաղաքներում, այլ մինչև անզայ մեծ ու փոքր գիւղերում։

Զ՞հաշւելով այստեղ գիւղական կիրակնօրեւ գպրցները, քաղաքների ու թեմական իշխանութիւնների ացածները, և ՚ե նկատի առնելով միմիայն մասնաւոր մականց ձևորով բացւածները, այդ տեսակ գպրցները մինչև 1896 թ. հաշ- տում էին 168 իւր 30 հազար աշակերտ շակերտահինե- րով և 3000-ի շափ ուսուցիչ—ուսուցչուհի հրով: Յիշեալ գպրցներից 90 իպական էին, 60 արական և 18 իտան:

զործը վարում են լուս ու մունջ, այնպիս որ այդ դպրոց-ները մնում են անկայտ ամենքի համար:

Կիրակնօրեայ գպրոցների գալափարը չէր կարող, ի հարկէ, անյայտ մ'եալ և մեզ՝ հայ ուսուցիչներիո։ Մեր մէջ ևս այդ գալափարը մի թեժե շարժում առաջացրեց։ Գանձեցան մարդիկ, հայ ուսուցիչներ, որոնք մի երկու տես սկիզբն որին կիրակնօրեայ գպրոցներին։ Զափահաս անգրագետների համար, եթէ չեմ սխալում, կիրակնօրեայ գպրոց առաջին անգամ բացւեցաւ 1881 թ. Թիֆլիսում ։ Յաւլարարի թագում. երկրորդն 1882 թվին Շամախու հայոց ուսումնաբանին կից, երբորդն էլ նոյն թւին Բագրի Հայոց ծխական գպրոցին կից՝ նախաձեռնութեամբ Բագրի Հայոց Մարգասիրական ընկերութեան նախին խարհրդի։ Յիշում եմ նոյնպէս թէ մեր պարբերական դրականութիւնը որպիսի համակրանքով խօսեց կիրակնօրեայ գպրոցների ու ըստանների մասին, թէ ինչպէս „Մշակլ“ համակրանքով ողջունից հայ-ուսուցչի ձեռնարկութիւնը՝ բանալ առաջին անգամ մեր մէջ կիրակնօրեայ գպրոց և ցանկացաւ այդ տեսակ վերին աստիճանի օգտաւէտ ձեռնարկութեան լնդհանրութիւնը բոլոր մեր հայաբնակ գաւառներում։ Բայց ցաւօք սրտի խնամառովանել, որ այդ գպրոցները տեղութիւն չ'ունեցան. մէկ երկու տարի գործեցին և ապա փակւեցան։ Ե՞նչից եր ոտ արդիօք. նրանից, որ մեր հասարակութիւնը կիրակնօրեայ գպրոցները օգտաւէտ չէր ճանաչում, թէ նրանից, որ գպրոցական պրակտիկայով պարապները իրենց առանց այն էլ ամենօրեայ ծանր աշխատութիւնը ծանրաբեռնել չկամեցան։ Չեմ վստահանում պատասխանել այդ հարցին. բայց պարտք եմ համարում գարձնել լնթերցողներիս ուշագրաւթիւնը այն բանի վերայ թէ ինչ ասել է կիրակնօրեայ գպրոց և ինչ գէպրում կարող է նա օգտաւ տալ մեր հայ ժողովրդին։

Կիրակինօրեայ դպրոցները չափահաս կամ անչափահաս աշակերտների համար թէ իրանց կազմութեամբ և թէ ծրա-

գրով պատկանում են տարրական գլոբոցների կարգին։ Կիրակնօրեայ գլոբոցները գլխաւորապէս լինում են ամենօրեայերեկայի, ուր ուսումն աւանդում է հասակաւոլներին երեկոները ամեն օր և կիրակնօրեայ, ուր ուսումն աւանդում է կիրակի և տօն օրերին, այսինքն այն ժամանակի, երբ աշակերտները ազատ են լինում իրանց ամենօրեայ սովորական աշխատանքից։

Ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ կարգի գլոբոցները կարող են լինել երկսու և խառն այսինքն տյնանախերը, որտեղ ուսանում են մի և նոյն դասարանում ոռպայ և օրիորդ, այր և կին։ Այդ աեսակ կիրակնօրեայ և երեկոյի գլոբոցները կարող են ունենալ երկու նալատակ։ Նախ՝ նրանից կարող են ուսուցանել զրադիտութիւն անգրագեա չափահաններին կամ անշափահաններին և երկրորդ՝ կրկնել անցածը, զարգացնել, ընդլայնել և լատ չափու կարուութեան կատարելագործել այն զրագետների ուսածները ու գիտելիքները, որոնց ձեւը են բերել ամենօրեայ գլոբոցներում կամ տանը առանձնապէս։

Յաճախ մեր մէջ, թէ քաղաքներում և թէ գլուխում, կարելի է գտնել այնպիսի անգրագէտներ, որոնք ամենօրեայ գլոբոցների մասամբ ստկաւութեան, մասսամբ ալ աղքատութեան պատճառով միջոց շունենալով յաճախել եղած գլոբոցները՝ պատրաստ են իրենց նուիրելու զրագիտութեան տօնօրերի հանգստի մի քանի ժամերում։ Կամ մեր մէջ ոչ միայն երիտասարդներ ու չափահաններ, որոնք զրկւած են ամենօրեայ գլոբոցներ յաճախելու հնարաւութիւնից և որոնք պատրաստ են նուիրել իրանց ազատ ժամերը զրագիտութեան, այլ և կան այնպիսիները, որոնք իրանց տղիտութիւնից յուսահատւած լինելով՝ պատրաստ են զրագիտութիւնը կուռվ վերցնել։ Դրան ազագոց կարող եմ բերել Շամախու հայոց գլոբոցների կից 1882 թիւն բաց արած կիրակնօրեայ զուբրցը զրագեա անգրագետ արհեստառ դասի համար՝ ուր մենք՝ երեք ուսուցիչներս՝ 60-ի չափ աշակերտներին երկու խմբի բաժա-

նելով՝ ստիպւած եղանք կարճելու նորեկ անգրագէտների ընդունելութիւնը, որպէս զի գլոբոցում աւելորդ բաժանմունք չ'ույանայ։ Ես շատ հեռու կ'զնայի, եթէ մի առ մի թւէի այն բոլոր փաստերը ապացուցանելու համար, որ սովորելու ցանկութիւն կայ մեր մէջ և եթէ մեր մէջ չեն եղել և չ'կան կիրակնօրեայ գլոբոցները, դա կախումն ունի նշանից, որ այդ տեսակ գլոբոցների համար աշակերտներ չեն ճարտիլ, այլ նրանից, որ կիրակնօրեայ գլոբոցների պակափարը դեռ չի ընտանիացեցիլ մեր մէջ և նրանց ալիք օգուտներին շատ էլ չեն հաւատում։

Անգրագէտները գլխաւորապէս լայն նպատակ չ'ունենալով՝ սաման վերջին նպատակը համարում են միայն կարդալութելու այն պուօժեար, որին շատ հեշտութեամբ կարելի է հասնել, եթէ ուսման հնչական եղանակը գործադրուի։ Դժւար չէ հասկանալ, որ եթէ աշակերտները շաբաթական մի քանի ժամ պարապելով՝ մնացեալ ժամերը կամ օրերը զիրք չեն վերցնիլ ձեռները, այն ժամանակ ուսման արգիւնքը կիրակ շատ աննշան և անմիջիթար։ Բայց շատ և շատ տարիներ են հարկաւոր, որ այդ տեսակ աշակերտները կարդանարագ, տրամաբանօրէն, որոշ առողարանութեամբ ու տրոհութեամբ, և առ հասարակ անցնեն ծխական գլոբոցի համեստ ծրագիրը։ Այդ տեսակ կիրակնօրեայ գլոբոցների հետեւնքները կարող են լինել զիւզերսւմ աւելի աննշան, և այդ այն պատճառով, որ զիւզացին միջոց չունի զիւզական աշխատանքի գրեթէ կէս տարին յաճախել զրաց կիրակի օրերին և որ այդ պատճառով զիւզական կիրակնօրեայ գլոբոցը պիտի ժաղովէ իւր աշակերտներին ամբողջ տարւայ ընթացքում 25—30 անգամ, պարապելով իւրաքանչիւր անգամին 3—4 ժամ։ Սշակերտի սէրը, եռանդը և ցանկութիւնը, որոնք կարող են դրգել նրան զէպի ընթերցասիրութիւն, տարարախտաբար նշանից զործին կ'նպասէին, այլ կարող էին մինչև անգամ վեամբ ուսման այն աշակերտին կա-

րելի է թոյլ տալ տանը կարդալ առանձնապես, որը կտրգումէ գիտակցաբար, այլապէս աշակէրտը սովորութիւն կանէ կտրդալ ոխալ և բառերը աղճատել: Այդ գէպը թուժ կարող է ը շօշափելի օգուտներ տալ կիրակնօրեայ գլորոցներին մի այնպիսի ձեռնարկի գործադրութիւնը, որ միջոց է տալիո աշակերտին ինքնուրոյնաբար ճանաչել զրագիտութեան զախտնիքը, այն է՝ գրել—կարդալը նկարներով: Փոքր ի շատէ փորձած ուսուցին չ'պէտք է զարմացնէ, իմէ մենք ունկելու լինենք, որ այդ տեսակ ձեռնարկի վերայ աշակերտը կարող է սովորել զրագիտութիւն շատ անգամ առանց ուսուցի օգնութեան: Բաւական է որ աշակերտը կարողանալ մի անգամ զիտակցաբար կապէ—միաւորէ երկու հնչիւն միատեղ, որպէս զի այբբուբէնի մնացեալ տառերը սովորել իշխը յիշեալ ձեռնարկի օգութեամբ իշխնուրոյնաբարար: Բայց մէնակ հէնց գրա մէջ չի կայանում այդ տեսակ ձեռնարկի զիտաւոր օգնութը կիրակնօրեայ զիւգական և քաղաքալին գլորցների համար, այլ նրա մէջ, որ այդ տեսակ ձեռնարկով գրել—կարդալ ուսուցանելու եղանակը զարթեցնում է աշակետի ինքնազործնուրիւնը, տալիս է նրան միջոց դիմուն, մտածելու և եզրակացնելու: Հենց առաջին ժամին առարկայի կամ բառի անունը գլրի մէջ կապում է դոյն իսկ ձեռնարկի մէջ նկարած առարկայի հետ: Այդ տեսակ ձեռնարկները, տարաբախտաբար, չկան մեղնում, այն ինչ արդարի արդեն մեծ ընդունելութիւն և զարգացնել երոպական մանկավարժների միջազգային կօնֆերանում: Եթէ մեր գլորցական փորձը կարդարացնի մեր ենթագլութիւնը, այն յիշեալ ձեռնարկի, շատ մեծ նշանակութիւն կտանան մեր ժողովրդի համար: Այն ժամանակ անշուշտ այդ տեսակ արհեստաւոր կամ երկրագործ մարդուն հեշտ կալ զարոց մի անգամ, քան ամեն օր, այլ այն ուսուցածառիվ, որ

հեշտ է ուսուցչի համար ևս պարապել աշակերտների հետ ձրիարար շաբաթը մի անգամ, քան ամեն օր: Սակայն պարզ է, որ ամենօրեայ երեկոյի գլորցները աւելի լաւ արգիւնք կտան, քան թէ զասաւութիւնը շաբաթը մի անգամ և որ այդ պատճառով ցանկալի կ'իննը բանալ և զիւգերում, և բաղաքներում զիտաւորապէս նշէ թէ կիրակնօրեայ, և այլ երեկոյի գլորցներ, այսինքն այնպիսիները, ուր կարողանալին յաճախել անգրագէտներ ամեն օր, երեկոները, ցերեկւայ աշխատանքից յետոյ: Գիւղացիք ամբողջ ձմեռ կարող են յաճախել զիրոց երեկոները, իսկ քաղաքներում զոնէ այլ հնարաւոր է զարնանը ու աշնանը, այն ժամանակ, երբ արհեստաւոր գասը վերջացնում է իր ցերեկւայ աշխատանքը:

Բոլորովին ուրիշ է կիրակնօրեայ գլորցների հարցը այն աշակերտների համար, որոնք աւարտել են զիրոցում ուսման ընթացքը կամ պատրաստել տանը առանձնապէս: Եթէ կիրակնօրեայ գլորցների նպատակներից մէկն էլ այն է՝ կրկնել անցածները, լրացնել թերութիւնները, ընդլայնել նրանց աշխարհայցը՝ համաձայն նրանց զարգացման ու պատրաստութեան և միջոցներ տալ զարգանալու ինքնակրթութեան մէջ, ապա ուրիմն նրանք կարող են տալ շօշափելի օգուտներ մինչեւ անգամ այն սահմանափակ և անհշան ժամերով, որ զոր են զնում սովորաբար կիրակնօրեայ գլորցները: Վերջիններս հարկաւոր են զիտաւորապէս թէ քաղաքներում և թէ զիւգերում և այն աշակերտների համար, որոնք աւարտել են ուսման ընթացքը ծխաղան զիրոցում, կամ շաւարտած կիսատ զորս զիացել: Աշակերտը Յ—Յ տարի մնալով զիրոցում և զորս գալով այնտեղից մի այնպիսի հասակում (11—13 տարեկան) երբ նա գեռ նոր է սկսում կարգալ զիտակցորէն, երբ նրա մէջ զեռ նոր է ծագում ուսման ճաշակը, մտնում է մեծաւ մասամբ այն հասարակութեան մէջ, որի անգամների մէջ զրագիտութիւնը հաղուգիւտ բան է համարւում, և այդպիսով նա ընդ միշտ կարճում է

Եւր յարաբերութիւնը դպրոցի հետ։ Այն, ի՞նչ որ տւել է նրանի դպրոցը, չի համապատասխանում արև պայմաններին, որոնք պիտի ազգեն նրա վերայ անդադաւ։ կամ աւելի պարզ ասել—նոր աւարտած աշակերտը պարապելով անկիրթ շրջանում տնային կամ փողոցային աշխատանքով, չունենալով միջոցներ, յարմար գէտքեր, երբեմն և հանարարութիւն պահպանելու իր իմացածները, սովորութիւն չ'անելով ազատ ժամերին գրելու կարգալ, նաև՝ կիանորի բժշնով ազդեցութեան տակ՝ վաղ կամ ուշ, մոռանում է կրկին գրեթէ այն ամենը, ինչ որ նա ստացել է դպրոցում երեւար տարիների ընթացքում։ Թուլանալով օրէցօր մտաւորապէս և կամաց կամաց հաւասարելով անզրապէտ ամբոխի ցատաւը աստիճանին, աշակերտը հետեւաբար ստորանում է և բարոյապէս։ Մենք մինչև հիմա կարծում եինք, թէ աշակերտը տարրական դպրոցը աւարտելուց յետոյ կարող է իր շրջապատսպ անզրապէտ ամբոխի վերայ ազգել արդիւնաւելու կերպով, կամ ժամանակով, ֆիզիքապէս և բարոյապէս կազդուրելով, կարսկ է օգտաւէտ քաղաքացի գառնալ։ Բայց տարաբարապարար մեր ենթագրութիւնները, կտրծիքները և յոյսերը և զերի են ելնում անգութ իրականութեան հանդիպ։ Այդ առեսակ յոյսերով ապրում են մեզնից շատերը զեռ մինչև այժմ էլ։ Բայց յոյսերը չեն արդարանում, ամենաաղիւ ձկուու ըները ու նպատակները չեն իրավործում։ Այն ժամանակ չայ ստուցիչը ինչով պիտի ապրի, նր պատճառները կ'ստիպեան նրան աւելի եռանգով աշխատել։ Ինչը կ'պահպանէ նրանց էներգեան գպրոցական ամենօրեայ աշխատանքի ժամանակ։ Չի մարի արդեօք ստուցի ուրը գլափի աւելի լայն կողմունչութիւն, իսկ աշակերտի մէջ ուրը գլափի ընթերցանութիւն, գլափի ինքնակրթութիւն, որ դպրոցը աշխատել է պահպատել նրան։ Կ'քայլէ արդեօք աշակերտը ինքնակրթութեաւ շալով, որ հարթել է նրա համար տարրական դպրոցը։ շալով, որ հարթել է նրա համար տարրական դպրոցը։ կ'մնայ արդեօք նրա մէջ այն բարոյական ոյժը, որ կարողանայ մաքառել իւր

շրջապատող ամբոխի տգիտութեան գէմ, եթէ թողած կ'լինենք նրան իւր սեպհական ոյժերի տնօրինութեանը, այն էլ այն հասակում, երբ դեռ այդ ոյժերը հասունացած չեն։

Այդ արդպէս լինելուց յետոյ ապացուցանել կիրակնօրայ կրկնողական դպրոցների ու լրացուցիչ կուրսերի կարեռութիւնը նրանց համար, որոնք սովորում են 3—5 տարի, կ'հշանակէ բացատրել առանց այն էլ մի պարզ աքսիօմանիրակնօրեայ կրկնողական և լրացուցիչ դպրոցների նշանակութիւնը, նրա կըթական, մանկավարժական և սոցեալական նշանակութիւնը շատ մեծ է և այնքան մեծ, որ կրկնողական դասերը 3—4 տարւայ գասընթացը կարեոր են համարւում Գերմանիայի, Շվեյցարեայի, Անգլիայի և Սաքսոնիայի նման երկրներում, ուր պարագագեալ ուսումն—գլխաւորապէս Գերմանիայում, և Շվեյցարեայում—ստիպում է աշակերտին 8 տարի սովորել (6 տ. —14 տ.), իսկ Սաքսոնիայում ամբողջ 9 տարի և որտեղ կտն և գրադարաններ, և՛ բազմաթիւ լրագրեներ, և՛ ժողովրդական գրքեր, որոնց մասին մենք գալափար շունենք։

Մեր ամենօրեալ ծխական քաղակային և գիւղական դպրոցներում ստացած ուսումն այնքան քիչ պահպանութիւն է գտնում մեզ շրջապատող կեանքի շրջանում, որ ակամայ հարց ես տալիս—արժէ միթէ մեծաքանակ ծախսեր անել մեր ծխական գպրոցերի վերայ։ Կարելի է հաստատել, որ առանց կրկնողական կուրսերի գյութեան, առանց ժողովրդական գրադարանների, ժողովրդական ընթերցումների և զրոյցների, մեր շանքերը—տարածել լուսաւորութիւն ժողովրդի մէջ, ապարդիւն կ'անցնեն, որովհետեւ տարրական գպրոցը իր սահմանափակ ծրագրով և կարաճե կուրսով կարող է երեխային ովորեցնել զերի—կարդալ մեքենայարար, բայց չէ կարող զարգացնել նրա մէջ ընդունակութիւն քննաբար վերաբերելու իր կարգոցածին և իրան շրջապատող խկութեանը։ Հասկանալի է ինքն ըստ ինքեան, որ ինչըան էլ զիրքը

Հետարքիր լինի և օգտաւէտ, եթէ նա կարդացուում է մեքենայաբար չի կարող հետարքը ըլ ընթերցողի և նրա մէջ հետզհետէ կ'մարի ընթերցանութեան սէրը. Իւսկ զրադարձան ների և առհասարակ գրքերի բացակայութենուը զիւզական ժողովրդի շրջանում կ'արագացնի ինքնակրթութեանը այդ բոլորի կ'ըստացուի անզրագիտութեան թեցիգիվիզմ. որ բալորուինի չի-մտնում կրթական հաստատաթիւնների հաշուի ուշէ, որպէս յա-ճախ բաւականի աչքի ընկնող ծախքեր են առաւմ և նեղու-թիւններ են կրում: Ուրիմն, քանի որ չկան մեր մէջ կի-րակնօրեալ կամ երեկոյի զպրոցներ, քանի որ չկան կրկնա-զական ու լրացուցիչ կուրսեր, լարաններ, մեր բազարա-յին ու գիւղական ծխական զպրոցների վերայ արած ծախ-քերը ապարդիւն կ'անցնեն: Բայց այլտի լառատափանել, որ մենք հարցի վերայ նայում ենք միակօգմանի, զբանվ, ի հարկէ, չի կարելի ստորացնել ծխական զուլուցների տած օգուտները: Հարցը թեցիգիվիզմի մասին այն ժամանակ մի-այն բազմակօգմանի կ'իներ և այն գէպքում պարզաբանած, եթէ մենք միջոց և կամք ունենայինք քննութեան ենթարկել մի յայտնի շրջանի, զաւառի կամ նահանգի. բոլոր աշակերտ-ներին մինչև, օրինակ, 20 տարեկան հաւակը, որոնք սովորել են զպրոցում թէկուզ երեր տարի: Բայց ժողովել այդ բոլորին և ըննութեան ենթարկել — շատ զժամար է, իսկ մի քանի սպայմաններում գրիթէ անկարելի: *) Եթէ հետաւոր լինէր, այն ժամանակ կիմացւէր, թէ զպրոցի հափերը մինչ աստիճան մհացել են այդ մարդկանց վերայ, թէ մինչ որ աստիճան նրանք զիտեն գիրք կամ լրագուլ կարգալ,

*) Սյսպիսի մի ուսումնասիրութիւն շուտով կ'առարի Բագւայ և ահանգի Շամախու և Գեօղչայ զաւաքանիսի հայակ զիւզերում որոշ ծրագրով և այդ ուսումնասիրութիւնը կ'առաջանակ պատճենաբանութեան մասին առաջարկ է առաջանակ պատճենաբանութեան մասին առաջարկ է:

իսանց միտքը գրքով յայտնել, թւերք զրել, խնդիրներ
լուծել . . . Այդ քննութիւնները մի որիշ կողմից
գուցէ ցոյց տւած կ'ինչէին, թէ ինչպէս ուսկաւ են զբուժ կամ
կարգուժ մեր զրագլաները, որքան ալքատ են մեր մէջ բէլ-
լիտրիստական զբւածքները և սրբան թռվանուժ ու մառացուժ
են բոլոր գիտելիրները և ակեկութիւնները, որոնք ձեռք են
բերած տարրական զսրոցներում հազար ու մի գժուարու-
թիւններով։ Ստկայն ամենիրին հասկանալի է, որ եթէ աշա-
կերտը իր ուսման ընթացքը զպրոցում տւարտելուց յետոյ
ինքնազարդացման շաւով առաջ չերթայ, նա ամպատճառ
յետ կ'բայլէ.զպրոցից գուրս գալու օրից կիմուի նրա և զպրո-
ցի մէջ եղած բարսյական կամլը։ Նրա մէջ կ'անյայտանայ ու
կ'մարի զպրոցի աշխատանքը, որի մասին նա գուցէ յիշէ մի-
այն այն ժամանակ, երբ նա զաւակի տէր կ'գառնայ, որին
լիշեցներով իր զպրոցական կեանքի ուրախ ու տիսուր ժամերը,
կ'ուղարկէ նրան զպրոց ուսանելու։ Ճշմարիտ է, թէ և զրա-
արդիւնքն էլ մենք չպետք աննշան համարենք, բայց որքան
աւելի լաւ կարող էին լինել մեր զպրոցների արդիւնքները,
եթէ զործը այնպէս կարգադրենք, որ աշակերտը՝ իր ուսու-
մըն տւարտելուց յետոյ՝ կիրակի կամ տօն օրերին մի քանի
ժամ նայէր այդ զպրոցի ներսը, որի մէջ նա անցրել է իսր
մատուղ կեանքի ամենաաթանգագին տարբները։

Սիսալ կ'լինէր, եթէ մենք առիխնք, թէ բաւական է
գէլծ մի կամ երկու անգամ յայտաբարել թէ զիւզում և թէ
քաղաքում կիրակնօրեայ դպրոցների բացման մասին և խորյն
դպրոցը կ'լեցւի աշակերտներով։ Մեր պարտականութիւնն է
այսուհետ ամենայն տոկունութեամբ աշխատել ժողովելու դրագէտ
և անզրագէտ չափահաս և անչափահաս աշակերտներ։ Գրանից
յետոյ մեր պարտականութիւնն է սիրել տալ նրանց մեր
դպրոցը, որոնք մեր անհոգութիւնից մնացել են խաւարի
մէջ։ Վհաս չունի, եթէ աշակերտները կանոնաւորապէս չեն
յաճախի դպրոց։ Թաղ միայն ուսուցիչը իր զործին սիրով վե-

բարերսի: Զի կարելի պահանջել աշակերտներից այնպիսի յատկութիւններ, որոնցից նրանք զուրկ են: Հետև կարելի պահանջել հաստատակամութիւն, որպիսին պարտաւոր է զարգացնել նրա մէջ գլուխի վարչութիւնը: **ՄԵՇՆԸ** պիտի ընդունենք նրան իրեն մի նոր զործ և չ'պիտի ի նժամանակը, որ աշակերտները կանոնաւորապէս կ'յաճախեն: Մեր պարտականութիւնն է պահպանել նրանց մէջ այդ ցանկութիւնը և զանազան արգելուների առաջն առնել:

Հիմնելով փաստերի վերայ, կարելի է երաշխաւորել որ կիրակնօրեայ գլուխները մեղնում անցուշտ կ'զանեն աշակերտներ և լուսաւորութեան զործին ծառայող ուսուցիչներ, եթէ միայն մեր գլուխների հոգաբարձռները ցանկութիւն յայտնէին բանալու ամենուրեք, որ Արան տմենօրեայ գլուխներ, նաև կիրակնօրեայ գլուխներ և մի և նոյն ժամանակ վարձատրէին նրանց մէջ ծառայող ուսուցիչներին:

